ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԶԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

28.06.2022 16:50

Հարգելի՛ փաստաբաններ,

Շիրակի, Լոռու, Արարատի, Սյունիքի, Տավուշի, Արմավիրի և Կոտայքի մարզերում տեղի ունենալիք մարզային համակարգողների ընտրություններին ընդառաջ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտն ամբողջացրել և խմբագրել է նշված մարզերում գործունեություն իրականացնող փաստաբանների ցուցակները (ընտրողների ցուցակներ): Ցուցակները՝ ըստ մարզերի, ներկայացվում է ստորև.

Շիրակի մարզի փաստաբանների ցուցակ,

Լոռու մարզի փաստաբանների ցուցակ,

Արարատի մարզի փաստաբանների ցուցակ,

Սյունիքի մարզի փաստաբանների ցուցակ,

Տավուշի մարզի փաստաբանների ցուցակ,

Արմավիրի մարզի փաստաբանների ցուցակ,

Կոտայքի մարզի փաստաբանների ցուցակ:

Խնդրում ենք նախապես ուսումնասիրել ցուցակները և դրանցում անճշտություն լինելու դեպքում ամենաուշը ընտրություններից մեկ աշխատանքային օր առաջ դիմել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտ՝ անճշտությունը շտկելու համար:

Հիշեցնենք, որ մարզի փաստաբանների ցուցակում հաշվառվում են այն փաստաբանները, որոնք՝ ա) հաշվառված են և գործունեություն են իրականացնում տվյալ մարզում, կամ բ) հաշվառված չեն տվյալ մարզում, սակայն մշտական հիմունքներով գործունեություն են իրականացնում տվյալ մարզում:

Պալատի ընդհանուր դեպարտամենտը մարզի փաստաբանների ցուցակը կազմելիս հիմք է ընդունում փաստաբանի անձնական գործում նշված հասցեն, բացառությամբ այն դեպքի, երբ՝ տվյալ փաստաբանը կամ մարզային համակարգողը ներկայացրել է դիմում և տվյալ փաստաբանի այլ հասցեի մասին ապացույցներ:

Ստորև մարզային համակարգողների ընտրությունների անցկացման վայրը և ժամանակը՝ ըստ մարզերի.

մարզ	ժամանակ	վայր
Շիրակի մարզ	01.07.2022թ. ժամը 12:00-ից 13:00	ք. Գյումրի, Անկախության հրապարակ 9
Լոռու մարզ	01.07.2022թ. ժամը 16:00-ից 17:30	ք. Վանաձոր, Մյասնիկյան 6շ., 37 տարածք
Արարատի մարզ	02.07.2022թ. ժամը 10:00-ից 11:30	ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փող., 60շ.
Սյունիքի մարզ	02.07.2022թ. ժամը 17:00-ից 18:00	Սյունիքի մարզ, ք. Կապան, Ա. Մանուկյան 1ա շենք, 19
Տավուշի մարզ	04.07.2022թ. ժամը 16:00-ից 17:00	ք. Իջևան, Անկախության փող. 16-19
Արմավիրի մարզ	05.07.2022թ. ժամը 10:30-ից 12:00	ք. Արմավիր, Հանրապետության 28
Կոտայքի մարզ	05.07.2022թ. ժամը 17:00-ից 18:30	ք. Աբովյան, Երիտասարդական փող. 5/3

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտ

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })